# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

20.09.2018թ.
ժամը 14:30

**Հանձնաժողովի անդամներ՝** Վարդուհի Վարդանյան
Մարիաննա Առաքելյան

**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**
(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

**<u>1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.</u>**
(Մ. Սիմոնյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 14.09.2018թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Գարդմեն>> ՍՊԸ-ի, <<Ցիկլոիդ>> ՍՊԸ-ի, <<ՄԱԿՐՈ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի, <<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Վիկտորիա Սամվելյանի և <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման

կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ն, <<Ցիկլոիդ**>> **ՍՊԸ-ն և Ա/Ձ Վիկտորիա Սամվելյանը** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 19.09.2018թ.-ի տեղեկատվության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով <<**ՄԱԿՐՈ ՖՈՒԴ**>> **ՍՊԸ -ն** ունի **14000** դրամ ժամկետանց պարտավորություն, <<**Հավերժ Ընկերներ**>> **ՍՊԸ-ն** ունի **6000** դրամ ժամկետանց պարտավորություն ժամկետանց պարտավորություն, որոնք գերազանցում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Ելնելով վերգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով <<**ՄԱԿՐՈ ՖՈՒԴ**>> **ՍՊԸ**-ի և<<**Հավերժ Ընկերներ**>> **ՍՊԸ-ի** հայտերը **մերժել**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

## 2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

2.1 ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին <<**Գարդմեն**>> **ՍՊԸ-ն, <<Ցիկլոիդ**>> **ՍՊԸ-ն, և** <<**Ֆոտոն**>> **ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

**Ա/Ձ Վիկտորիա Սամվելյանը** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը չի ներկայացրել:

2.2 Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել **Ա/Ձ Վիկտորիա Սամվելյանին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

## 3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

**4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/5 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 25.09.2018թ.-ին ժամը 10:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան